ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2021թ. N ՄՊ/172-2021

ք. Արմավիր

«ՇԵՆԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի 2021 թվականի մայիսի 14-ի N01/05.1/331-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի մայիսի 17-ի N01/11.1/03053-2021 գրությունը և «Շենիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի մայիսի 18-ի գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը, 2021 թվականի հունվարի 15-ին դպրոցում կայացած «Նախնական զինվորական պատրաստություն» («ՆԶՊ») առարկայի մրցույթը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N396-Ն հրամանով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպելու և անցկացնելու համար.

որոշում եմ՝

1. «Շենիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Պետրոսյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Действительная подпись

VERIFIED OCSP 31.05.2021 16:27:57 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230